# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

**Աբովյան համայնքի կարիքների համար Աբովյան համայնքի փողոցներում կանգառների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խարիրդատվական աշխատանքների ձեռքբերման նպատակով «ԱԲՀ-ԳՀԽԱԾՁԲ-22/39» ծածկագրով գնանշման հարցումով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Աբովյան

24/08/2022թ.
ժամը 15:30

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Չոբանյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ս. Չիտչյան, Գ. Խաչատրյան, Լ. Շառաջյան, Լ. Իսահակյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Տ. Զոհրաբյան |

**1. Բացված հայտերում պահանջվող պարտադիր և ոչ պարտադիր փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**
**(Ա. Չոբանյան)**

Ընդունել ի գիտություն, որ մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր /պարտադիր/ փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.

ա) «ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.3-ը ներկայացվել է թերի՝ հավելվածի 2.5 ա կետում կատարված չէ համապատասխան նշում, էլեկտրոնային թվային ստորագրությունը հավելվածում բացակայում է: Նմանատիպ պայմանագրի վրա բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ինչպես նաև հանձնման-ընդունման արձանագրությունները: Առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները բացակայում են:

բ) «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ի կողմից կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.3-ը ներկայացվել է թերի՝ հավելվածի 3.7 ա և 3.9.2 կետերում կատարված չեն համապատասխան նշումներ: Նմանատիպ պայմանագրի վրա բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը: Առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները բացակայում են:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝
«ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ին և «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում՝ օրենքով սահմանված ժամկետում /23.08.2022թ. ներառյալ/ շտկել արձանագրված

անհամապատասխանությունները:
Ընդունել ի գիտություն, որ «ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն օրենքով սահմանված ժամկետում /23.08.2022թ. ներառյալ/ շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, իսկ «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ն շտկել է թերի՝ չի ներկայացրել գեոդեզիստի որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

## 2. Գնային և ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին (Ա. Չոբանյան)

2.1 Ոչ գնային չափանիշները գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել է հետևյալ կարգով.

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Գնահատման չափանիշը | | |
|---|---|---|---|---|
| | | Մասնագիտական փորձառություն | Աշխատանքային ռեսուրսներ | Ընդամենը |
| | | */առավելագույն միավորը/40/* | */առավելագույն միավորը/30/* | */առավելագույն միավորը/70/* |
| 1 | «ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | 40 | 30 | 70 |
| 2 | «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ | 40 | 15 | 55 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

2.2 Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով /համաձայն հրավերով սահմանված բանաձևի/.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնային պայմանի գնահատականը |
|---|---|---|
| | | *Առավելագույն միավորը/30/* |
| ***Աբովյան համայնքի կարիքների համար շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերում*** | | |
| 1 | «ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | 30 |
| 2 | «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ | 28,38 |

2.3 Բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը գնահատվել է հետևյալ կարգով /համաձայն հրավերով սահմանված բանաձևի/

| Զբաղեցրած տեղ | Մասնակցի անվանումը | Մասնակցին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ) |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| | | *Առավելագույն միավորը/42/* |
| ***Աբովյան համայնքի կարիքների համար շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերում*** | | |
| 1 | «ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | 42 |
| 2 | «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ | 36,36 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

**3. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

**(Ա. Չոբանյան)**

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԱԲՀ-ԳՀԽԱԾՁԲ-22/39» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում «ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն՝ որպես ամենաբարձր գնահատական (ՄԳ) ստացած մասնակից:

3.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Ա. Չոբանյան |
| Անդամներ՝ | | Ս. Չիտչյան |
| | | Գ. Խաչատրյան |
| | | Լ. Իսահակյան |
| | | Լ. Շառաջյան |
| Համակարգող | | Տ. Ջոհրաբյան |